

Մամլոյ Հաղորդագրութիւն

Յայտարարութիւն՝ Լիբանանի կառավարութիւնը պէտք է գործէ պաշտպանելու Սուրիացիները իր հողերուն վրայ:

Ազգային Համակարգող Մարմինը կը յայտնէ խորին մտահոգութիւնը այդ յարձակումներուն շուրջ, որոնց կ'ենթարկուին Սուրիացի քաղաքացիները՝ գործաւորներ ու գաղթականներ Լիբանանի մէջ, որ վերջերս ըստ տեղեկատուական և իրաւապաշտպանական զեկոյցներուն, դարձաւ անհատական գործողութիւններէ ծրագրուած հաւաքական գործողութիւններու: Մարդկային իրաւանց դիտարանի կազմակերպութեան ներկայացուցիչը Լիբանանի մէջ հաղորդեց թէ՛ կազմակերպութիւնը նկատեց յարձակումներու սաստկացումը Սուրիացի գաղթականներուն հանդէպ Արսալի պատերազմէն ի վեր: Ան աւելցուց թէ փաստագրուած են յարձակման գործողութիւններ Սուրիացի գաղթականներուն հանդէպ Պիքաաի և Աքքարի մէջ, ինչպէս վրաններ այրել և գաղթականներ վտարել ոչ պաշտօնական անձնաւորութիւններու կողմէ:

Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ այս գործողութիւնները, հաստատելով Լիբանանի և Սուրիոյ ժողովուրդի միասնականութիւնը պատմութեան ընթացքին, ուր Սուրիացիները ընդունեցին միլիոնաւոր գաղթական Լիբանանցիներ իրենց ենթարկուած աղէտներուն պատճառով վերջին մի քանի տասնամեակներու ընթացքին, սկսելով քաղաքային պատերազմէն 1860-ին, անցնելով երկամեայ պատերազմէն և Իսրայելի ներխուժումէն 1982-ին, և վերջինը Յուլիսի պատերազմը: Ան կոչ կ'ուղղէ նաև Լիբանանցի եղբայրներուն, քաղաքային հասարակութեան կազմակերպութիւններուն և մարդկային իրաւանց կազմակերպութիւններուն, որպէսզի դէմ դնեն այս ոճրային գործողութիւններուն Սուրիացի քաղաքացիներուն հանդէպ, ինչպէս նաև կը պահանջէ Լիբանանի իշխանութիւնները, որպէսզի ձեռնարկէ ամենասաստիկ իրաւական գործարկութիւնները այդ անձերուն դէմ, որոնք կը յարձակին անմեղ Սուրիացի քաղաքացիներուն վրայ:

15/9/2014

Ազգային Համակարգող Մարմին Սուրիոյ մէջ - Տեղեկատուութեան գրասենեակ